

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Հայկական ՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմած՝ Ֆրիկի ստեղծագործությունների համաբարբառը խմբագրելու ընթացքում հարկ եղավ ուսումնասիրել նրա «Բանաստեղծություններ» ժողովածուն, որ լույս է տեսել 1941 թ. ԱրմՖԱՆ-ի հրատարակության մեջ: Դա նշանավոր բանաստեղծ Ֆրիկի տաղերի առաջին ամբողջական ու ամփոփիչ ժողովածուն է, որտեղ, սակայն, դրանք բազմադան աղճատումների են ենթարկվել և սխալներով ներկայացվել ընթերցողներին: Նման վիճակը, որ բնավ արդարացնել չի կարելի, ստեղծվել է այն պատճառով, որ Ֆրիկի բանաստեղծությունները ժողովածուում տպագրվել են ոչ այնպես, ինչպես որ նրանք կան դրա համար հիմք ծառայած, բանասեր Տիրայրի կազմած ձեռագիր օրինակում, որ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (Տիրայրի արխիվ, թղթ. 131, վավ. 2):

Ֆրիկի տաղերը, ճիշտ է, տպագրության են արժանացել դեռևս հայ տպագրության հիմնադրման շրջանից սկսած, և առանձին բանաստեղծություններ են լույս տեսել այլևայլ պարբերականներում ու հանդեսներում, բայց, այնուամենայնիվ, նրանք երկար ժամանակ չեն ամփոփվել մի առանձին ժողովածուում: Այդ շնորհակալ գործին, ինչպես հայտնի է, ձեռնամուխ է եղել Տիրայր արքեպիսկոպոս Մելիք-Մուշկամբարյանը, որը ջերմ սիրով, առանց ջանք ու եռանդ, ժամանակ ու միջոցներ խնայելու, աշխարհի բազմադան վայրերում գտնվող բազմադան ձեռագրերից ու աղբյուրներից բաղել-հավաքել է Ֆրիկի տաղերը և կատարել մի կողմից՝ տեսական-քննական ուսումնասիրություն, մյուս կողմից՝ տպագրության պատրաստել դրանց բնագրերը՝ իրենց այլընթերցվածներով:

Տիրայրի այդ աշխատանքը, սակայն, ժամանակին լույս չի տեսել, իսկ նրա հիման վրա հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուում Ֆրիկի տաղերը բազմադան՝ տեքստաբանական, բառային, քերականական, ուղղագրական ու կետադրական աղճատումների ու աղավաղումների են ենթարկվել, որոնք, բնականաբար, շատ տեղեր խեղաթյուրել են նրանց բովանդակությունը, իջեցրել նաև գեղարվեստական արժեքն ու նշանակությունը: Հաստատվեց՝ այդ փաստերով. «Ընթերցանայից որ կու ծախէր», «Թող չի խաբի յանցաւորէս սորա աղէկըն բան չգայ», «Ջինջ մոռացած կայր զայն յիշել», «Հեղու բոլոր մարմինդ ամէն», «Աւաղ ասաց հաղար բերան», «Ջայս փողոս տանք ոսկի առնունք», «Ջգեցար մարմին դու զագամայ», «Մէկին ըլլայ (—դեղին Ա. Մ.) երևացար, մէկինըն թուխ, մէկին սահտակ», «Սրտի ականջով լըսէ մի՛ առնեմ աստէնս դու քոսաս», «Հանին ի շորս մարդու թևի Որ այս գերիկըս չէր յօժար», «Հանապազ գաւր ժողովեն», «Խեղօք ես նոցա ասեմ Որ ողջնու թանգար գրէին»... Բնագրային տողերի ընդգծված բառերն, օրինակ, ժողովածուում աղավաղվել ու ներկայացվել են կու ծախէր (32), առա (49), մոռացած հայր (53), Հեզ ու (101), առանց (102), առնունք (103), Ջգեցար (134), տըլայ (135), քոսան (197), գերիկըս (201), գաւր (188), բանգար (129)՝ ձեռքով:

Այդպես և Տիրայրի ձեռագիր օրինակի՝ «Թ՛ողորդ սիրելի ես դու հանց արա որ զքեզ չխառնեմ», «Բաղուկըդ հաստ էր ու յաղթող...», «Ջաղքատն երբ բոբիկ տեսնու և մերկիկ տուր զին քըթէթին», «Ըզմեղ երեստ աստուած ի ձեռն անարիւնաց, որ կստորեն» նախադասությունները ներկայացվել են «Թ՛ող ուղ սիրելի ես դու հանց արա որ զքեզ չխառնեմ» (87), «Բաղուկըդ հաստ էր ու յաղթող...» (97), «Ջաղքատն երբ բոբիկ տեսնու և մերկիկ տուր զին քըթէթին» (127), «Ըզմեղ երեստ աստուած ի ձեռն անարիւնաց, որ կատարենք աղավաղումներով:

Այսպիսով՝ ժողովածուում ըստ էության հաշվի չեն առնվել Ֆրիկի բանաստեղծությունների ընդհանուր բովանդակությունը, նախադասությունների, բառակապակցությունների, բառերի բուն իմաստն ու նշանակությունը, ինչպես նաև անտեսվել ու խեղաթյուրվել են գրաբարի ու միջին հայերենի լեզվական, քերականական շատ օրենքներ ու կանոններ:

Ժողովածուն չի է նաև բազմադան վրիպակներով և ուղղագրական բնույթի սխալներով. յ-ով սկսվող շատ բառեր, օրինակ՝ յալիտեան, յամաւել, յաւար, յանկարծակի և այլն, հա-

ճախ տպագրվել են հ-ով. առանձին դեպքերում ուր-ը՝ վոր (58), ոչ-ը՝ վոչ (57), յոյս-ը՝ հույս (93), ողջոյն-ը՝ ողջույն (138), խոստացաւ-ը՝ խոստացաւ (129), տնօրէնութիւն-ը՝ վերնագրում (էջ 150) և ցանկում (էջ 273)՝ տնօրէնութիւն ձևերով են հրամցվել ընթերցողներին, թյուրիմացության մեջ գցելով, անշուշտ, թե՛ դրանց և թե՛ մանավանդ միջին հայերենն ուսումնասիրողներին:

Խառնակ է նաև Ֆրիկի տաղերում կիրառված կետադրութիւնը. նրանցում հետևողականորեն չեն պահպանվել հայերենի կետագրության անգամ ամենասովորական ու պարտադիր կանոնները: Օրինակ՝ կոչականները մեծ մասամբ չեն զատվել նախադասության անդամներից, գլխավոր ու երկրորդական նախադասութիւնները շատ հաճախ չեն տրոհվել, նախադասության համազոր ու ստորադաս անդամները շատ դեպքերում ճիշտ չեն կետադրվել և այլն:

Աղավաղումներից ու աղճատումներից զերծ չեն ո՛չ Ֆրիկի տաղերի տարբերակները ներկայացնող ծանոթագրութիւն-համեմատութիւնները և ո՛չ էլ հատկապես ժողովածուի վերջում ղեկավարած «Բառարանը», որտեղ բաղմամբիվ բառեր ու ձևեր սխալ բացատրութիւն են ստացել: Այս ամբողջն էլ ցույց է տալիս, որ 1941 թ. հրատարակված՝ Ֆրիկի «Բանաստեղծութիւններ» ժողովածուն բանաստեղծի տաղերի իրական վիճակը չի ներկայացնում:

Այս մեծ պակասը, անշուշտ, լրացնում է Տիրայրի «Ֆրիկ. Դիվան» աշխատութիւնը (Նյու Յորք, 1952), որը հիմնականում ճիշտ է արտացոլում Ֆրիկի բանաստեղծութիւնների բնադրերը և իրավամբ պատվավոր տեղ ունի միջնադարյան տաղասացների երկերի հրատարակութիւնների շարքում: Ըստ որում, այն զգալապես տարբերվում է արդեն հիշատակված, Մաշտոցի անվան Մատենադարանում պոնովոդ ձեռագիր օրինակից և ավելի մշակված, ճշգրտված, համալրված, տարբերակներով, դիտական ծանոթութիւններով, բառարանով ամբողջացված աշխատութիւն է, որի արժեքն ու նշանակութիւնը հաղիվ թե հնարավոր լինի գերազնահատել:

Չնայած դրան, Ֆրիկի ստեղծագործութիւնների նոր, դիտական-ակադեմիական հրատարակութիւնը մեծ կարևորութիւն ու անհրաժեշտութիւն է ներկայացնում, որովհետեւ՝ ա) Տիրայրի «Ֆրիկ. Դիվան» աշխատութիւնը 30 տարի առաջ արտասահմանում լույս տեսած լինելով՝ ամենեւին մատչելի չէ բոլորի համար. բ) Տիրայրի իսկ վկայությամբ՝ այն, մանավանդ տաղերի աղբյուրների հիշատակման տեսակետից, իր թերի ու պակասավոր կողմերն ունի. գ) վերջին տասնամյակների ընթացքում նոր հայտնագործումներ են եղել, և նաև տեղաշարժեր են կատարվել ֆրիկագիտութիւն մեջ:

Այս ամենը, բնականաբար, թե՛ Ֆրիկի ստեղծագործութիւնների նոր, գիտական-ակադեմիական հրատարակության պահանջն է առաջադրում և թե՛ միաժամանակ ազդանշում, որ զա իրագործելու համար անցյալի նվաճումներից զատ պետք է քննական-համեմատական լուրջ աշխատանք կատարել, պետք է Ֆրիկի բոլոր տաղերն իրենց բոլոր տարբերակներով ի մի բերել և հանգամանորեն բաղդատել իրար հետ, պետք է պարզել մութ ու անորոշ կետերը և առավել ստույգ ու ճշգրիտ դարձնել նրանց բնագրերը:

Կարծում ենք, ժամանակն է ձեռնամուխ լինելու Ֆրիկի տաղերի նոր, գիտական-ակադեմիական հրատարակության կարևոր գործին:

Բաճախ. գլխ. ղոկաւոր Ալ. ՄԱՐԿԱՐՅԱՆ